- *Տնտեսական աճի տեմպը շարունակել է նվազել, քանի որ տնտեսությունը հուլիսին (ՆՏՆԺՀ) ընդլայնվել է 6 տոկոսով՝ ի տարբերություն 2023 թ. առաջին կեսի 11 տոկոս միջին աճի:*
- *Օգոստոսին գրանցվել է գների 0.2 տոկոս անկում, որը հիմնականում պայմանավորված էր սննդամթերքի գների նվազմամբ:*
- *Ապրանքների արտահանման և ներմուծման ծավալներն ընդլայնվել են երկնիշ տեմպով՝ պայմանավորված առևտրի վերարտահանմամբ:*
- *Հուլիսին բյուջեն պակասուրդային էր՝ հաստատուն եկամուտներով (ՆՏՆԺՀ) և 87 տոկոս բարձր կապիտալ ծախսերով (ՆՏՆԺՀ):*
- *Վարկավորման ու ավանդադրման ծավալները դանդաղ են աճել, իսկ ֆինանսական ցուցանիշները շարունակել են մնալ հաստատուն:*

Տնտեսական ակտիվությունը հուլիսին թուլացավ՝ մինչև 6 տոկոս (ՆՏՆԺՀ, իրական արտահայտությամբ)՝ ի տարբերություն հունիսի (ՆՏՆԺՀ) 6.8 տոկոսի: Արդյունաբերական արտադրանքի թողարկման ծավալների կրճատումը շարունակել է ետ պահել աճը՝ չնայած հուլիսին գրանցված անկումը (2.4 տոկոս, ՆՏՆԺՀ) ավելի փոքր է եղել, քան հունիսին (7.4 տոկոս, ՆՏՆԺՀ), քանի որ հանքարդյունաբերության ոլորտի ակտիվությունը որոշակիորեն վերականգնվել է հուլիսին (2.9 տոկոս աճ)՝ հաջորդելով մի քանի ամիսների կրճատմանը: Շինարարության աճը մի փոքր թուլացել է՝ հունիսի 18.1 տոկոսից հասնելով 17.8 տոկոսի՝ հուլիսին (ՆՏՆԺՀ): Այդուամենայնիվ, առևտրից հետո աճի ամենաբարձր տեմպը գրանցվել է շինարարության ոլորտում, որը հուլիսին ընդլայնվել է 20.4 տոկոսով (ՆՏՆԺՀ) (Գծապատկեր 1): Ծառայությունների ոլորտում (առանց առևտրի) աճը կազմել է 5.8 տոկոս (ՆՏՆԺՀ): Հանրագումարային աճը դանդաղել է՝ 2023 թ. 1-ին եռամսյակի 11.4 տոկոսից (ՆՏՆԺՀ) հասնելով 10.4 տոկոսի՝ 2023 թ. հունվար-հուլիս ամիսներին (ՆՏՆԺՀ), ընդ որում՝ աճի տեմպն ամենաբարձրն է եղել առևտրի ոլորտում (23 տոկոս) և ամենացածրը՝ արդյունաբերության ոլորտում (0.5 տոկոս):

Պահանջարկի կողմում աճը 2023 թ. 1-ին եռամսյակում հիմնականում պայմանավորված է եղել մասնավոր սպառմամբ և ներդրումներով: Դրան նպաստել են իրական աշխատավարձերի մոտավորապես 16 տոկոսի բարձրացումն ու զբաղվածության ցուցանիշի բարելավումը: Զուտ արտահանումն, այդուհանդերձ, բացասական նպաստ է ունեցել 10.5 տոկոս իրական աճում, քանի որ ներմուծման աճի տեմպը գերազանցել է արտահանման համանուն ցուցանիշը:

Հուլիսին Ռուսաստանից դրամական փոխանցումների ներհոսքը գրեթե կիսվել է՝ համեմատած 2022 թ. հուլիսի հետ, որ ուղեկցվել է Ռուսաստանից արտահոսքերի կրկնապատկմամբ՝ ցածր բազայից: Այդուամենայնիվ, դրամական զուտ փոխանցումների ընդհանուր ծավալն ընդամենը 2 տոկոսով է ցածր եղել (ՆՏՆԺՀ)՝ պայմանավորված 2022 թ. հուլիսին բացառապես ցածր զուտ ներհոսքերով: Թեև դրամական փոխանցումների և՛ ներհոսքերում և՛ արտահոսքերում գրանցվում է զգալի տատանողականություն, գերիշխող միտումն ընդգծում է ներհոսքերի նվազում և ավելի մեծ արտահոսքեր Ռուսաստան (Գծապատկեր 2):

Գների աննշան նվազում (0.2 տոկոս) է գրանցվել օգոստոսին (ՆՏՆԺՀ)՝ միջին գնաճը օգոստոսին իջեցնելով մինչև 3.1 տոկոս (Գծապատկեր 3): Օգոստոսին ընդհանուր ՍԳԻ նվազումը հիմնականում պայմանավորված է եղել սննդամթերքի գների անկմամբ (4 տոկոս անկում, ՆՏՆԺՀ) և հաղորդակցության գներով (0.5 տոկոս անկում, ՆՏՆԺՀ): Մյուս կողմից՝ տրանսպորտային գները մի փոքր բարձրացել են (0.7 տոկոս)՝ երեք ամիս շարունակ գնանկումից հետո: Ի պատասխան՝ ՀՀ կենտրոնական բանկը, սեպտեմբերի 12-ին խորհրդի նիստում վերաֆինանսավորման տոկոսադրույքը նվազեցրեց 50 բազիսային կետով՝ հասցնելով 9.75 տոկոսի:

Ապրանքների արտահանման և ներմուծման ոլորտում շարունակվել է գրանցվել երկնիշ ամսական աճ, որը չափավորված է 2023 թ. առաջին մի քանի ամիսների համեմատ: Ապրանքների արտահանումն ու ներմուծումը հուլիսին աճել է, համեմատաբար, 16 և 20 տոկոսով (ՆՏՆԺՀ)՝ պայմանավորված մեքենասարքավորումների և տրանսպորտային միջոցների վերաարտահանմամբ: Բացի այս ապրանքատեսակներից՝ Հայաստանի հիմնական արտահանման որոշ մասը կրճատվել է: Հուլիսին պղնձի և պատրաստի սննդամթերքի

Կազմեց ավագ տնտեսագետ Արմինե Մանուկյանը,
amanookian@worldbank.org

արտահանումն անվանական արտահայտությամբ նվազել է, համապատասխանաբար, 10 և 8 տոկոսով: Ընդհանուր առմամբ՝ 2023 թ. հունվար-հուլիս ամիսներին արտահանման և ներմուծման ծավալներն աճել են, համապատասխանաբար, 62 և 63 տոկոսով (ՆՏՆԺՀ)՝ հանգեցնելով առևտրի հաշվեկշռի 64 տոկոս վատթարացման (ՆՏՆԺՀ):

Դրամի փոխարժեքը կայուն է եղել ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ օգոստոսին և սեպտեմբերի առաջին կեսին, բայց շարունակել է ամրապնդվել ռուբլու նկատմամբ: Սեպտեմբերի 15-ի դրությամբ ՀՀ դրամը 42 տոկոսով ամրապնդվել է ռուբլու նկատմամբ (ՆՏՆԺՀ) (Գծապատկեր 4): Միջազգային պահուստները օգոստոսին ավելացել են 94 միլիոն դոլարով՝ պահպանելով պահուստները պատմականորեն բարձր մակարդակում՝ 4.2 միլիարդ ՀՀ դրամ, որը համարժեք է ներմուծման 3.5 ամսվա ծածկույթի (Գծապատկեր 5):

Հուլիսին բյուջեն ունեցել է 38 միլիարդ ՀՀ դրամ պակասուրդ, որը 3.6 անգամ գերազանցել է 2022 թ. հուլիսի պակասուրդը: Ընդհանուր եկամուտները հաստատուն են եղել անցած տարվա հուլիսի համեմատ, մինչդեռ ծախսերը 14 տոկոսով բարձր են (ՆՏՆԺՀ)՝ հիմնականում պայմանավորված 87 տոկոսով ավելի բարձր կապիտալ ծախսերով (ներառյալ պաշտպանությունը): Ընթացիկ ծախսերը նույնպես հուլիսին 7 տոկոսով բարձր են եղել (ՆՏՆԺՀ), ինչը հիմնականում պայմանավորված է սոցիալական պաշտպանության ոլորտում ծախսերի 13 տոկոսով ավելացմամբ (ՆՏՆԺՀ): Հուլիսի պակասուրդի երկու երրորդը ֆինանսավորվել են արտաքին աղբյուրներից: Ընդհանուր առմամբ, 2023 թ. հունվար-հուլիս ամիսներին բյուջեն դեռևս գրանցել է հավելուրդ (96 միլիարդ ՀՀ դրամ)՝ չնայած բյուջեի պլանով նախատեսված էր ավելի քան 100 միլիարդ պակասուրդ: 2023 թ. առաջին յոթ ամիսներին եկամուտներն ավելացել են 15 տոկոսով (ՆՏՆԺՀ)՝ պայմանավորված ԱԱՀ-ի, եկամտահարկի և շահութահարկի հավաքագրման ավելի բարձր մակարդակով: Նույն ժամանակահատվածում ընթացիկ և կապիտալ ծախսերն ավելացել են, համապատասխանաբար, 11 և 27 տոկոսով (ՆՏՆԺՀ):

Ֆինանսական ցուցանիշները մնացել են կայուն. հուլիսին գրանցվել է եկամտաբերության աննշան ավելացում և բանկային վարկերի ու ավանդների միջին աճ: Կապիտալի համարժեքության գործակիցները պահպանել են կայունությունը՝ 20.1 տոկոս: Չաշխատող վարկերի գործակիցը հուլիսին մնացել է անփոփոխ 2.85 տոկոս, մինչդեռ շահութաբերությունը (ըստ ակտիվների) բարձրացել է՝ հունիսի 2.74 տոկոսից մինչև 2.96 տոկոս՝ հուլիսին: 2023 թ. բանկային վարկավորումը շարունակել է ավելի արագ աճել, քան ավանդադրումը, վարկերը հուլիսին ավելացել են 2.4 տոկոսով (ՆՏՆԺՀ)՝ ի համեմատ ավանդների 1 տոկոս աճի (ՆՏՆԺՀ)՝ երկուսն էլ անվանական արտահայտությամբ:

Կազմեց ավագ տնտեսագետ Արմինե Մանուկյանը,
amanookian@worldbank.org

Գծապատկեր 1. Արդյունաբերական արտադրանքի թողարկման ծավալները հուլիսին կրճատվել են, մինչդեռ գործունեության մյուս տեսակներն ընդլայնվել են

(Տնտեսական ակտիվության ցուցանիշ, փոփոխությունը ՆՏՆԺՀ, %)



Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե

Գծապատկեր 2. Ռուսաստանից դրամական փոխանցումների համախառն հոսքերը շարունակել են նվազել

(հազար ԱՄՆ դոլար)



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ

Գծապատկեր 3. Հուլիսին շարունակվել է թույլ գնանկումը

(ՍԳԻ գնաճ, փոփոխությունը ՆՏՆԺՀ, %)



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ

Գծապատկեր 4. ՀՀ դրամը պահպանել է կայունություն ԱՄՆ դոլարի նկատմամբ, սակայն ամրապնդվել է ռուբլու նկատմամբ

(համաթիվ՝ մարտ 2, 2020 = 100)



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ

Կազմեց ավագ տնտեսագետ Արմինե Մանուկյանը,
amanookian@worldbank.org

Գծապատկեր 5. Միջազգային պահուստներն ավելացել են օգոստոսին և պահպանվել են պատմականորեն բարձր մակարդակում
(միլիոն ԱՄՆ դոլար)
(ներմուծման ամսաթվեր)



Աղբյուրը ՝ ՀՀ ԿԲ

Գծապատկեր 6. Բյուջեի հաշվեկշիռը պահպանել է հավելուրդ 2023 թ. հուլիս ամսվա ընթացքում

(միլիարդ ԱՄՆ դոլար)



Աղբյուրը ՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

Կազմեց ավագ տնտեսագետ Արմինե Մանուկյանը,
amanookian@worldbank.org